Հաստատված է
Հայաստանի Հանրապետություն
Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի
կառավարման խորհրդի
2023թ. նոյեմբերի 29-ի N 07-Լ որոշմամբ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԸՆԴԵՐՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

2024 ԹՎԱԿԱՆԻ

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

ՀՀ ք. Երևան, 0009, Կորյուն փողոց 15, կայք՝ http://www.ecoinspect.am/
☎ հեռ. (015) 48-48-48, էլ. փոստ՝ info@ecoinspect.gov.am

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հապավումներ 2
Ներածություն 3
Բնապահպանական վերահսկողության սկզբունքները 3-4
Կառուցվածք
Հիմնական կառուցվածքային ստորաբաժանումներ 4
Տարածքային բաժիններ 5
Տարածքային ստորաբաժանումների տեղակայումը՝ Քարտեզ 1 6
Բյուջե 7
Կարիքներ 7
Համագործակցություն 7
Տեղեկատվության հավաքագրման աղբյուրները 7-8
Ստուգման ենթակա տնտեսավարող սուբյեկտների ռիսկայնությունը՝ Քարտեզ 2 9
Տնտեսական գործունեության գերակշռող մաս կազմող ոլորտները՝ Քարտեզ 3 10
ԾՐԱԳՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ
1. ԲԸՏՄ-ի վերահսկողության ոլորտների ընդհանուր վիճակը 11
1.1 Բուսական և կենդանական աշխարհի օգտագործման և պահպանության վերահսկողության ուղղություններ 11
1.1.1 Առկա խնդիրները և բացահայտված ռիսկերը 11-15
Ապօրինի ծառահատումների և ձեռքբերված փայտանյութի տեղափոխում՝ Աղյուսակ 1 13
Հատված ծառերի առավելագույն քանակները ըստ տարիների՝ Գրաֆիկ 1 14
1.1.2 Ռիսկերի նվազեցմանն ուղղված տարեկան միջոցառումներ 16-17
1.2 Ընդերքօգտագործման և ընդերքի պահպանության ուղղություն 18
1.2.1 Առկա խնդիրները և բացահայտված ռիսկերը 18-20
1.2.2 Ռիսկերի նվազեցմանն ուղղված տարեկան միջոցառումներ 20-22
1.3 Մթնոլորտային օդի, ջրերի, հողերի, վտանգավոր նյութերի և թափոնների գործածության, օգտագործման և պահպանության ուղղություններ 23
1.3.1 Առկա խնդիրները և բացահայտված ռիսկերը 23-25
1.3.2 Ռիսկերի նվազեցմանն ուղղված տարեկան միջոցառումներ 26-27
2. 2024 թվականի տարեկան ծրագրով պլանավորված ստուգումներ 28-31
ԲԸՏՄ-ի վերահսկողության ոլորտներում խնդիրների և ռիսկերի նվազեցմանն ու վերացմանն ուղղված 2024 թվականի միջոցառումների ժամանակացույց 32-38
ԲԸՏՄ-ի կանխարգելիչ և իրազեկման 2024 թվականի միջոցառումներ 39-41

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
Խորհուրդ	ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի կառավարման խորհուրդ
Գրասենյակ	Վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակ
ԲԸՏՄ	ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմին
ՋՄՀԹՎՆՎՎ	Ջրերի, մթնոլորտի, հողերի, թափոնների և վտանգավոր նյութերի վերահսկողության վարչություն
ԸՎՎ	Ընդերքի վերահսկողության վարչություն
ԿՎՎ	Կենսաբազմազանության վերահսկողության վարչություն
ՌԳՎՎ	Ռիսկի գնահատման և վերլուծությունների վարչություն
ԻԱՓՎ	Իրավական աջակցության և փաստաթղթաշրջանառության վարչություն
ԻՀՀՏԱԲ	Իրազեկման և հանրության հետ տարվող աշխատանքների բաժին
ԼՀԲ	Լաբորատոր հետազոտությունների բաժին
ՏԲ	Տարածքային բաժին
ՍԹԱ	Սահմանային թույլատրելի արտանետում
Ծրագիր	Տարեկան գործունեության ծրագիր

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Խորհրդի 2021 թվականի ապրիլի 2-ի թիվ 05-Լ որոշման հավելվածի 35-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն յուրաքանչյուր տարվա դեկտեմբերի 1-ին նախորդող նիստին Խորհուրդը քննարկում և հաստատում է ԲԸՏՄ-ի գործունեության տարեկան ծրագիրը, որը հրապարակվում է պաշտոնական կայքէջում:

«Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի համաձայն Տեսչական մարմնի գործունեության սկզբունքներն են՝

1) **հրապարակայնության սկզբունք**՝ տեսչական մարմինն իրազեկում է հանրությանը իր գործառույթների իրականացման արդյունքում հայտնաբերված էական վտանգների և դրանց վերացման ուղղությամբ ձեռնարկված միջոցառումների մասին՝ անձանց, հասարակության և շրջակա միջավայրի անվտանգությունը, ինչպես նաև ֆիզիկական և իրավաբանական անձանց և պետության շահերը պաշտպանելու նպատակով.

2) **թափանցիկության սկզբունք**՝ տեսչական մարմինը տնտեսավարող սուբյեկտների համար ապահովում է կանխատեսելի միջավայր՝ միասնական սկզբունքներով իրականացնելով վերահսկողության գործառույթները և հասանելի դարձնելով դրանք հանրությանը: Տեսչական մարմինը տնտեսավարող սուբյեկտներին տրամադրում է անվճար խորհրդատվություն և այլ մեթոդական աջակցություն իր իրավասության բնագավառի հարցերի վերաբերյալ՝ օգնելով վերջինիս հասկանալ, թե օրենսդրությամբ նախատեսված ինչ պահանջների պետք է համապատասխանի և ինչ միջոցներ պետք է ձեռնարկի իր գործունեությունն օրենքների և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխանեցնելու համար.

3) **հաշվետվողականության սկզբունք**՝ տեսչական մարմինն իր գործունեության համար հաշվետու և պատասխանատու է պետության և հանրության առաջ.

4) **անկողմնակալության սկզբունք**՝ տեսչական մարմնի ծառայողներն իրենց գործառույթներն իրականացնում են օբյեկտիվ և անկողմնակալ: Արգելվում է տեսչական մարմնի ծառայողի գործառույթների իրականացումը սույն օրենքով նախատեսված շահերի բախման առկայության դեպքում.

5) **ամբողջականության սկզբունք՝** տեսչական մարմնի գործառույթներն իրականացվում են կանխարգելիչ գործունեության, վերահսկողության և հետադարձ կապի միջոցով, որոնք փոխլրացնում են միմյանց՝ ապահովելով տեսչական մարմնի գործունեության անընդհատությունն ու ամբողջականությունը: Կանխարգելիչ գործունեությունը համարվում է տեսչական մարմնի գործառույթների իրականացման առաջնային միջոց.

6) **ըստ ռիսկայնության առաջնորդվելու սկզբունք՝** տեսչական մարմինը ռեսուրսները նպատակաուղղում է դեպի այն ոլորտները և տնտեսավարող սուբյեկտները, որոնք առավել ռիսկային են:

ՀՀ վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 706-Ա որոշմամբ ԲԸՏՄ-ի համար սահմանվել է թվով 194 հաստիք, որից 34-ը՝ թափուր:

Կառուցվածք: ԲԸՏՄ-ը կազմված է ութ կառուցվածքային և տասնմեկ տարածքային ստորաբաժանումներից: Տարածքային ստորաբաժանումները տեղաբաշխված են Երևանում և ՀՀ տասը մարզերում: ԲԸՏՄ-ի ստորաբաժանումների իրավասությունները սահմանում է մարմնի ղեկավարը՝ հաստատելով դրանց կանոնադրությունները:

ԲԸՏՄ-ի կառուցվածքային ստորաբաժանումներն են՝

1) Ջրերի, մթնոլորտի, հողերի, թափոնների և վտանգավոր նյութերի վերահսկողության վարչություն,
2) Ընդերքի վերահսկողության վարչություն,
3) Կենսաբազմազանության վերահսկողության վարչություն,
4) Որակի ապահովման վարչություն,
5) Ռիսկի գնահատման և վերլուծությունների վարչություն,
6) Իրավական աջակցության և փաստաթղթաշրջանառության վարչություն,
7) Իրազեկման և հանրության հետ տարվող աշխատանքների բաժին,
8) Լաբորատոր հետազոտությունների բաժին:

ԲԸՏՄ-ի տարածքային ստորաբաժանումներն են՝

1) Երևանի տարածքային բաժին,
2) Արագածոտնի տարածքային բաժին,
3) Արարատի տարածքային բաժին,
4) Արմավիրի տարածքային բաժին,
5) Գեղարքունիքի տարածքային բաժին,
6) Լոռու տարածքային բաժին,
7) Կոտայքի տարածքային բաժին,
8) Շիրակի տարածքային բաժին,
9) Սյունիքի տարածքային բաժին,
10) Վայոց ձորի տարածքային բաժին,
11) Տավուշի տարածքային բաժին:

ԲԸՏՄ տարածքային ստորաբաժանումների տեղակայումն ըստ վարչական տարածքների, հասցեները և հեռախոսահամարները ներկայացված են *Քարտեզ 1-ում*:

Քարտեզ 1

Տեսչական մարմնի տարածքային ստորաբաժանումների տեղակայումը՝ ըստ վարչական տարածքների



Բյուջե: ԲԸՏՄ-ն լիազորությունների իրականացման նպատակով 2024 թվականի կտրվածքով պլանավորել է իրականացնել 1,162,801,100 ՀՀ դրամի բյուջետային հատկացում, որից միայն աշխատանքի վարձատրություն՝ 904,504,100 ՀՀ դրամ:

Կարիքներ: ԲԸՏՄ-ն լիազորությունների շրջանակներում վերահսկողությունը հրապարակային, թափանցիկ, անկողմնակալ և ամբողջական իրականացնելու նպատակով ապահովելու է կադրերի մասնագիտական ներուժի շարունակական կատարելագործումը: Անցկացվելու են նաև քաղաքացիական ծառայության թափուր հաստիքները զբաղեցնելու համար արտաքին մրցույթները: Մասնագիտական կարողությունները և դրանց շարունակական կատարելագործումը ԲԸՏՄ աշխատանքի հիմքն են:

ԲԸՏՄ աշխատակիցների, ինչպես նաև նոր նշանակված ծառայողների համար կազմակերպվելու են շարունակական վերապատրաստումներ պաշտոնավարման ամբողջ ընթացքում՝ ապահովելով նրանց համապատասխանության և մասնագիտական որակավորումների բարձր մակարդակը:

Համագործակցություն:

2023 թվականին Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի հետ ստորագրված համագործակցության հուշագրի շրջանակներում իրականացվելու են շարունակական աշխատանքներ:

Շարունակվելու է Երևանի պետական, Հայաստանի ազգային պոլիտեխնիկական, Հայաստանի ազգային ագրարային համալսարանների հետ ստորագրված հուշագրերի շրջանակներում համագործակցությունը:

Շարունակվելու է նաև Կովկասյան բնության հիմնադրամի (CNF) և Բնության համաշխարհային հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղի (WWF-Հայաստան) հետ ակտիվ համագործակցությունը:

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՔԱԳՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

ԲԸՏՄ-ն իր նպատակն ու խնդիրներն իրականացնելու համար վարում է տվյալների բազա, որը ներառում է տեղեկատվություն վերահսկման ոլորտներում գործող բոլոր

տնտեսավարող սուբյեկտների և ռիսկայնության աստիճանը որոշող չափանիշներով գնահատված միավորները:

ՀՀ կառավարության 2019 թվականի օգոստոսի 22-ի N 1125-Ն որոշմամբ ԲԸՏՄ-ի կողմից իրականացվել է ստուգման ենթակա տնտեսավարող սուբյեկտների դասակարգում ըստ ռիսկայնության աստիճանների (բարձր ռիսկայնության՝ 989, միջին ռիսկայնության՝ 2455 և ցածր ռիսկայնության՝ 1507): Ըստ ռիսկայնության աստիճանների դասակարգված տնտեսավարող սուբյեկտների քանակը և դրանց՝ ըստ վարչական տարածքների բաշխվածությունը ներկայացված է *Քարտեզ 2-ում*:

ՀՀ-ում առավել ռիսկային ոլորտները և տնտեսական գործունեություն իրականացնող տնտեսավարող սուբյեկտները բացահայտելու, ինչպես նաև Ծրագրի կազմման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով ԲԸՏՄ-ը տեղեկատվություն է հավաքագրել պետական, տեղական ինքնակառավարման մարմիններից, այլ կազմակերպություններից, քաղաքացիներից և այլ աղբյուրներից:

Մասնավորապես՝

- ✓ Պետական եկամուտների կոմիտե և պաշտոնական կայքէջ,
- ✓ Շրջակա միջավայրի նախարարություն և պաշտոնական կայքէջ,
- ✓ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն և պաշտոնական կայքէջ,
- ✓ Տնտեսավարող սուբյեկտների կողմից ներկայացված եռամսյակային և տարեկան վարչական-վիճակագրական հաշվետվություններ,
- ✓ ԲԸՏՄ-ին և «Թեժ գիծ» հեռախոսահամարին ստացված դիմում-բողոքների ու ահազանգերի վիճակագրություն:

ԲԸՏՄ-ի կողմից վերահսկման ենթակա տնտեսական գործունեության գերակշռող մաս կազմող ոլորտները ըստ վարչական տարածքների ներկայացված են *Քարտեզ 3-ում*:

Քարտեզ 2

Տեսչական մարմնի կողմից 2024 թվականին ստուգման ենթակա թվով 4951 տնտեսավարող սուբյեկտների ռիսկայնությունը՝ ըստ վարչական տարածքների

Քարտեզ 3

Տեսչական մարմնի կողմից վերահսկման ենթակա տնտեսական գործունեության գերակշռող մաս կազմող ոլորտները՝ ըստ վարչական տարածքների

1. ԲԸՏՄ-Ի ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՎԻՃԱԿԸ

Գործունեության տարեկան ծրագրի կազմման համար հիմք են հանդիսացել ԲԸՏՄ-ի կողմից իրականացված վերահսկողության արդյունքների վերլուծությունները՝ պայմանավորված առավել այն ռիսկային ուղղությունների բացահայտմամբ, որոնցում ավելի հաճախ են կատարվել իրավախախտումներ: Համաձայն այդ վերլուծությունների՝ առավել ռիսկային են համարվում տնտեսական գործունեության հետևյալ ոլորտները՝

- ✓ ոչ մետաղական հանքավայրերի և հանքային ջրերի շահագործում,
- ✓ անտառային տնտեսություններ և հատուկ պահպանվող տարածքներ,
- ✓ էլեկտրաէներգիայի արտադրություն հիդրոէլեկտրակայաններում,
- ✓ թափոնների տեղադրում և ոչնչացում,
- ✓ շինարարություն,
- ✓ ոռոգում և ջրամատակարարում,
- ✓ ձկնաբուծություն:

1.1. ԲՈՒՍԱԿԱՆ ԵՎ ԿԵՆԴԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.1.1 Առկա խնդիրները և բացահայտված ռիսկերը

Անտառներն ունեն ինչպես բնապահպանական, այնպես էլ ազգային անվտանգությունն ապահովող նշանակություն: Ներկայումս բնական գործոնների բացասական ազդեցության հետևանքով անտառային էկոհամակարգը վտանգված է:

ՀՀ-ում ավելացել են ոչ օրինական անտառհատումները, սակայն դեռևս ճշգրիտ չեն դրանց ծավալներն ու հաճախականությունը: Բնակչության սոցիալական անապահովության պատճառով անտառհատումները դեռևս գերազանցում են բնափայտի օրինական հատումների ծավալները: Հիմնախնդիրները կայանում են նրանում, որ էներգակիրները՝ էլեկտրական էներգիան և գազը, աստիճանաբար

թանկանում են, իսկ փայտանյութը դեռևս հանդիսանում է ինչպես անտառամերձ բնակավայրերի, այնպես էլ բնակչության սոցիալապես անապահով խավերի համար հիմնական վառելանյութ: Անտառների ոչ ռացիոնալ օգտագործման, այսինքն՝ արածեցման, խոտհունձի և այլ պատճառներով կրճատվում են արժեքավոր անտառների տարածքները, անտառներում ծառուտները կորցնում են իրենց բնական վերականգնման ունակությունը, հետևաբար կորցնում են իրենց արտադրողականությունը:

Անկանոն անտառհատումները նպաստում են կլիմայի փոփոխությանը և հրդեհավտանգության բարձրացմանը: Դրանք նպաստում են հրդեհավտանգ պայմանների առաջացմանը, ծառուտների չորացմանը և հիվանդությունների ու վնասատու միջատների բազմացմանը:

ԲԸՏՄ-ի կողմից ձեռնարկված միջոցառումների արդյունքում հայտնաբերված ապօրինի ծառահատումների, նաև անտառների պահպանությամբ զբաղվող պաշտոնատար անձանց հանցակցությամբ կատարված դեպքերի վերաբերյալ նյութերն ուղարկվել են իրավապահ մարմիններին, վերջիններս էլ վերոնշյալ նյութերի հիման վրա հարուցել են քրեական գործեր՝ ապօրինի անտառհատումների և պաշտոնեական լիազորությունները չարաշահելու դեպքերով:

Վերջին տարիներին անտառհատումներից առաջացած տարածքներում նկատվում են հողատարման և ձորակների առաջացման, աղբյուրների չորացման երևույթներ, որոնք վնաս են հասցնում համայնքներին և գյուղատնտեսական նշանակության հողատարածքներին:

ԲԸՏՄ-ի կողմից իրականացված հետևողական վերահսկողության արդյունքների հիման վրա կայուն բարձր ռիսկային և երկարաժամկետ բնույթ են կրում համատարած ապօրինի ծառահատման և ձեռքբերված փայտանյութի տեղափոխմանն առնչվող հիմնախնդիրները: Դրա մասին են վկայում ԲԸՏՄ-ի կողմից հավաքագրված վիճակագրական տվյալները, համաձայն որոնց ապօրինի ծառահատումների ծավալի նվազման էական միտում չի գրանցվել (*Աղյուսակ 1*):

Աղյուսակ 1

Վիճակագրություն ապօրինի ծառահատումների և ձեռքբերված փայտանյութի տեղափոխման վերաբերյալ					
ժամանակահատվածը	*հատված ծառերի քանակը /հատ/*	*ձեռքբերված փայտանյութի ծավալը /խմ/*	*տուգանված անձանց թվաքանակը*	*կիրառված վարչական տուգանքի չափը (ՀՀ դրամ)*	*բնությանը պատճառված վնասի գումարի չափը (ՀՀ դրամ)*
2020 թվական	12,978	1,647	324	33,836,000	814,714,440
2021 թվական	19,475	2,567	272	28,780,000	1,004,640,274
2022 թվական	18,405	1,231.8	218	22,340,000	893,690,284
2022 թվականի 9 ամիս	13,442	858	135	13,990,000	503,674,364
2023 թվականի 9 ամիս	11,996	3,006.5	144	14,070,000	1,067,781,197

2023 թվականի ապօրինի ծառահատումների աշխարհագրության վերլուծությամբ առավել խնդրահարույց են ՀՀ Գեղարքունիքի, Լոռու, Կոտայքի, Սյունիքի և Տավուշի մարզերի գրեթե բոլոր անտառածածկ տարածքները: Նշված մարզերն ունեն ամենամեծ անտառային ֆոնդերը (*Գրաֆիկ 1*):

Գրաֆիկ 1



Շարունակական վերահսկողության շրջանակներում արձանագրվել են նաև փայտածուխի արտադրամասերի կողմից տնտեսական գործունեության արդյունքում շրջակա միջավայրին պատճառված վնասի դեպքեր, երբ տնտեսավարողները գործունեությունն իրականացնում են անտառային և համայնքային հարակից տարածքներում, չեն ապահովում հրդեհային անվտանգության պահանջները, մթնոլորտ են արտանետում թունավոր գազեր, չեն ապահովում արտադրական թափոնների ճիշտ կառավարում և տեղադրում՝ աղտոտելով հարակից տարածքների հողերը:

Կենդանական աշխարհի օգտագործման և պահպանության առումով ևս հիմնախնդիրների առաջացման հիմնական պատճառ են հանդիսանում մարդածին գործոնները՝ որսագողությունը, գերորսը, անապատացումը, ջրային բալանսի խախտումը, բնակլիմայական պայմանների խախտումը, էկոլոգիական

իրազեկվածության պակասը, շրջակա միջավայրի աղտոտվածության ավելացումը, ջրաճահճային տարածքների չորացումը, բնակավայրերի ընդլայնումը և այլն:

Վերջին տարիներին էլեկտրաէներգիայի արտադրությամբ զբաղվող հիդրոէլեկտրակայաններում գործունեությունն իրականացվում է տրված նախագծով պահանջների խախտմամբ, այն է՝ ձկնուղիների սխալ կառուցում, էկոթողքերի չապահովում, ջրառի տրված թույլտվությունների պայմանների անհամապատասխանություն, որոնք կարող են պատճառ հանդիսանալ գետի ինքնավերականգնման, ռեկրեացիոն գոտիների խաթարման, միկրոկլիմայի և էկոհամակարգի հավասարակշռության խախտման, ձկների միգրացիոն ուղիների խաթարման և վերարտադրության դադարման:

Հասարակության շրջանում տարածված է նաև զվարճանքի և հանգստի վայրերում վայրի կենդանիների անազատ պայմաններում պահումը, երբ չեն պահպանվում տվյալ կենդանատեսակին բնորոշ կերի չափաբաժնի և պահման ռեժիմի, վերարտադրման պահանջների ապահովումը:

ՀՀ սահմանակետերը և պետական եկամուտների կոմիտեն չեն տրամադրում համապատասխան տեղեկատվություն կենդանիների ներմուծման և արտահանման վերաբերյալ: Ոլորտային ռիսկը պայմանավորված է վայրի կենդանական, բուսական աշխարհի օբյեկտների օգտագործումից (գերօգտագործումից) շահույթ (գերշահույթ) ստանալու հետ:

Արձանագրվում է արդյունագործական ձկնորսության թույլտվություններում նշված պահանջների և պայմանների խախտում, այն է՝ ձկնորսության ցանցերի չափերի անհամապատասխանություն, որի հետևանքով խոցելի է դառնում նաև ոչ սեռահասուն մանրաձուկը:

Վերոգրյալ հիմնախնդիրների առաջացման նախապայման են համարվում սոցիալ-տնտեսական առկա իրավիճակը, էկոկրթության և իրազեկվածության ցածր մակարդակը, ոլորտի իրավական կարգավորումների հակասություններն ու բացերը:

1.1.2 Ռիսկերի նվազեցմանն ուղղված տարեկան միջոցառումներ

Սույն ուղղություններում արձանագրվող իրավախախտումների քանակի և դրանց հետևանքով առաջացող ռիսկերի նվազեցման նպատակով 2024 թվականի կտրվածքով ԲԸՏՄ-ի կողմից իրականացվելու են ՀՀ օրենսդրությամբ սահմանված վերահսկողական միջոցառումներ՝ տարեկան պլանավորված ստուգումներ, ինչպես նաև իրավապահ և այլ պետական մարմինների հետ համատեղ շարունակական կանխարգելիչ միջոցառումներ: Նշված միջոցառումների շրջանակներում ստուգվելու են տեղափոխվող փայտանյութի ձեռքբերման օրինականությունը և կենդանական աշխարհի օբյեկտների օգտագործման թույլտվությունների առկայությունը, ինչի արդյունքում արձանագրված դեպքերի առնչությամբ ԲԸՏՄ-ի կողմից ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացվելու է վարչարարություն: Հավանական իրավախախտումների բացառման և կանխարգելման նպատակով իրականացվելու են իրազեկման և բացատրական լայնածավալ աշխատանքներ, հանդիպումներ:

Բուսական և կենդանական աշխարհի օգտագործմանն ու պահպանությանը վերաբերող ՀՀ օրենսդրությունը կարգավորող առաջարկությունները դեռևս 2023 թվականին ներկայացվել են լիազոր մարմին, քննարկվել են շահագրգիռ մարմինների հետ, սակայն դեռևս չեն հաստատվել: Վերոգրյալի շրջանակներում 2024 թվականին կիրականացվեն քննարկումներ.

- ✓ Առաջարկություն. «Բնապահապանական իրավախախտումների հետևանքով կենդանական և բուսական աշխարհին պատճառված վնասի հատուցման սակագների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու վերաբերյալ,
- ✓ Առաջարկություն. ՀՀ շրջակա միջավայրի նախարարությանը՝ հատատեղերի շահագործման, թափուկի դուրս բերման և ցանկացած տեսակի

փայտանյութի տրամադրման գործընթացները կարգավորող օրենսդրական ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարելու վերաբերյալ,

- ✓ Առաջարկություն. Գրասենյակին և ՀՀ շրջակա միջավայրի նախարարությանը՝ «Որսի և որսորդական տնտեսության վարման մասին» ՀՀ օրենքում և «Որսի կանոնները հաստատելու մասին» ՀՀ բնապահպանության նախարարի հրամանում փոփոխություններ և լրացումներ կատարելու վերաբերյալ:

ԲԸՏՄ-ի կողմից իրականացվելու են ուժեղացված վերահսկողական համատեղ միջոցառումներ, մասնավորապես՝

- ✓ 2023 թվականի դեկտեմբերից մինչև 2024 թվականի հունվար սիգի ձվադրման ժամանակահատվածում վերարտադրությունն ապահովելու նպատակով,
- ✓ 2023 թվականին մեկնարկած և 2024 թվականին շարունակվելիք ապօրինի ծառահատումների և ձեռք բերված փայտանյութի տեղափոխման դեպքերի կանխարգելման նպատակով:

1.2. ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ

1.2.1 Առկա խնդիրները և բացահայտված ռիսկերը

Վերահսկողական աշխատանքների արդյունքում արձանագրվել են ընդերքօգտագործման իրավունք ունեցող ընկերությունների կողմից օգտակար հանածոյի արդյունահանման նախագծի շեղումներ, մասնավորապես՝

- ✓ ընդերքօգտագործման աշխատանքներն իրականացվել են առանց հողատարածքի օգտագործման պայմանագրի և/կամ առանց հողատարածքի նպատակային նշանակությունը փոխելու: Ընդերքի մասին ՀՀ օրենսգրքով սահմանված է, որ ընդերքի օգտագործման իրավունք ստացած անձը չի կարող սկսել հանքարդյունահանման աշխատանքներն առանց տվյալ տարածքի սեփականատիրոջ համապատասխան համաձայնության կամ հողատարածքի օգտագործման պայմանագրի:
- ✓ ոչ մետաղական օգտակար հանածոների արդյունահանման իրավունք ունեցող ընկերությունները ընդերքօգտագործման ընթացքում չեն ապահովում երկրաբանական և մարկշեյդերական փաստագրության վարման լիարժեքությունը, օգտակար հանածոների պաշարների շարժի հաշվառման իրականացման և տեղեկատվության ներկայացման սահմանված պահանջների կատարումը: Երկրաբանական և մարկշեյդերական քարտեզագրումը (երկրաբանական քարտեզներ՝ երկրակեղևի որևէ տեղամասի երկրաբանական կառուցվածքը արտահայտող գծագրեր, մարկշեյդերական գործ՝ հանքափորվածքներում կատարված տարածական-երկրաչափական չափումների տվյալները՝ օգտակար հանածոների հանքավայրերի շահագործման ժամանակ ու դրանց փաստաթղթավորումը) ունեն առանցքային նշանակություն հանքարդյունաբերության մեջ:

- ✓ ընդերքօգտագործման իրավունք ունեցող ընկերությունների կողմից չեն պահպանվում հանքերի օգտակար հանածոյի արդյունահանման նախագծով սահմանված հանքաստիճանի և հանքախորշի բարձրությունը, լայնությունը, խորությունը և երկարությունը:

Օգտակար հանածոյի արդյունահանման նախագծերի բոլոր այս խախտումները հանգեցնում են հանքերի ոչ ճիշտ և լիարժեք շահագործմանը:

Արձանագրվել են ընդերքօգտագործման իրավունքով տրամադրված տեղամասերի, հողամասերի կոորդինատների անճշտություններ և անհամապատասխանություններ, մասնավորապես՝ օգտակար հանածոյի արդյունահանման թույլտվությամբ տրամադրված կոորդինատները չեն համապատասխանում պաշարների հաշվարկմանը կից երկրաբանական քարտեզներով նշված տեղամասերի հետ (շեղումները երբեմն կազմում են տասնյակ կիլոմետրեր):

Համայնքներում համայնքի ավագանու կամ ղեկավարի որոշմամբ առանց ընդերքօգտագործման իրավունքի առկայության տնտեսավարողներին տրամադրվում է համայնքային հողամասերի սահմաններում պետական հաշվեկշռում չհաշվառված ոչ մետաղական օգտակար հանածոների արդյունահանման, քարհավաքման և սելավատարերի մաքրման աշխատանքների թույլտվություն՝ առանց լիազոր մարմնին տեղյակ պահելու: Նշված դեպքերում անհրաժեշտ է խստագույնս առաջնորդվել Կառավարության 2013 թվականի փետրվարի 21-ի «Իրավաբանական անձանց և քաղաքացիներին սեփականության իրավունքով պատկանող հողամասերի սահմաններում ընդերքօգտագործման կարգը սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի նոյեմբերի 13-ի թիվ 1932-ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 152-Ն որոշման պահանջներով:

ՀՀ Արմավիրի և Արարատի մարզերում Արաքս գետի ողջ երկայնքով գործող ընդերքօգտագործման իրավունք ունեցող բոլոր 12 ընդերքօգտագործողներին

ընդերքօգտագործման իրավունքով տրամադրված տեղամասերում (շուրջ 40 կմ) իրականացվել են չափագրման աշխատանքներ:

Իրականացված վերահսկողական աշխատանքների արդյունքում բացահայտվել են ինչպես ընդերքօգտագործման տեղամասերից դուրս արդյունահանման, այնպես էլ Արաքս գետի հունի փոփոխության դեպքեր, որոնց հիման վրա համապատասխան առաջարկություններ են ուղարկվել Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն Արաքս գետի հունի փոփոխությանը հանգեցրած ընկերությունների ընդերքօգտագործման իրավունքները դադարեցնելու առաջարկով:

Հայաստանի Հանրապետությունում շինարարության ծավալների աճին զուգահեռ ավելացել են ապօրինի ընդերքօգտագործման դեպքերը: Միայն 2023 թվականի 9 ամիսների ընթացքում Տեսչական մարմնի կողմից, ինչպես նաև իրավապահ մարմինների հետ համագործակցության արդյունքում հայտնաբերվել է 85 ապօրինի ընդերքօգտագործման դեպքեր: Իրականացված չափագրումների արդյունքում պարզվել է, որ նշված դեպքերից միայն 67-ով ապօրինի արդյունահանված բնական ռեսուրսի ծավալը կազմում է 1.431.026 խմ (ավազակոպճային խառնուրդ, բազալտանման լեռնային զանգված, հրաբխային խարամ և այլն), մնացած 18 դեպքերով դեռևս հաշվարկ չի կատարվել:

Բոլոր դեպքերով նյութերն ուղարկվել են իրավապահ մարմիններին՝ օրենքով սահմանված կարգով հետագա ընթացքն ապահովելու համար:

1.2.2 Ռիսկերի նվազեցմանն ուղղված տարեկան միջոցառումներ

Ընդերքօգտագործման և պահպանության ուղղությունում արձանագրվող իրավախախտումների քանակի և դրանց հետևանքով առաջացող ռիսկերի նվազեցման նպատակով 2024 թվականի կտրվածքով ԲԸՏՄ-ի կողմից իրականացվելու են ՀՀ օրենսդրությամբ սահմանված վերահսկողական միջոցառումներ՝ տարեկան պլանավորված ստուգումներ և արտաժրագրային ստուգումներ:

Պարբերաբար իրականացվելու են ընդերքօգտագործման ոլորտը կարգավորող օրենքների և ենթաօրենսդրական ակտերի վերաբերյալ իրազեկման աշխատանքներ՝ ընդերքօգտագործման ոլորտում իրավախախտումների կանխարգելման ցուցանիշը բարձրացնելու և հանքարդյունահանման աշխատանքները ՀՀ օրենսդրությանը համապատասխան իրականացնելու նպատակով:

Առաջնային նշանակություն ունի Տեսչական մարմնի՝ ընդերքի վերահսկողության ոլորտում ներգրավված աշխատակիցների կարողությունների բարձրացումը: Ընդերքօգտագործման ծրագրերի շուրջ տարաձայնությունների զգալի մասը պայմանավորված է գիտելիքների և տվյալների, ինչպես նաև ժամանակակից հանքարդյունահանման առաջադեմ միջազգային փորձի և տեխնոլոգիաների ոչ լիարժեք իմացությամբ:

Տեսչական մարմնի կարողությունների զարգացումը ենթադրում է մասնագետների վերապատրաստում՝ հետևյալ հնարավորություններով.

- ✓ ընդերքաբանական, տեխնիկական անվտանգության և շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննությունների ապահովում,
- ✓ նոր տեխնոլոգիաների ներդրման, լաբորատոր և տեխնիկական այլ սարքավորումների հագեցվածության ապահովում:

Ընդերքօգտագործման ոլորտում նոր տեխնոլոգիաների խթանմանն ու ընդգրկմանը զուգընթաց՝ Տեսչական մարմնի ընդերքի վերահսկողության վարչության թափուր հաստիքների համալրման համար անհրաժեշտ է պահանջել ինժեներական և ՏՏ ծառայությունների ոլորտում խորը գիտելիքների իմացություն և բարձր կարողություններ, ինչպես նաև կազմակերպվելու են շարունակական մասնագիտական վերապատրաստման դասընթացներ՝ կիրառելով առաջատար միջազգային փորձի փոխանակման և բարձր տեխնոլոգիաների ներդրման սկզբունքը:

Վերահսկողական գործընթացները մետաղական հանքավայրերում առավել արդյունավետ դարձնելու նպատակով հանքարդյունաբերության ոլորտի զարգացման

ռազմավարության մեջ ներառվել է Տեսչական մարմնի կողմից առաջարկված փոփոխությունները.

- ✓ Արդունահանման որակի ապահովում և հանքաքարի որակի վերահսկում,
- ✓ Տվյալների մշակման, վերլուծության և մոդելավորման ծրագրային ավտոմատացում:

Որակի վերահսկողական գործընթացները և կառավարման համակարգերը կարևոր նշանակություն ունեն հանքարդյունաբերության արտադրողականության համար, քանի որ արտադրանքի որակի նույնիսկ 1% տարբերությունը կարող է մեծ փոփոխությունների ենթարկել կորզվող մետաղների վերջնական որակը և ծավալները:

Սա գործընթաց է, որը պահանջում է իրական ժամանակում տվյալների հավաքագրում, ինչը շատ կարևոր է որակի կորուստը նվազագույնի հասցնելու համար: Իրական ժամանակի տվյալների հավաքագրումը նշանակում է, որ Տեսչական մարմինը նաև տեղյակ կլինի իրական ժամանակում որակի անկման մասին: Տվյալների հոսքերը և գործընթացների ավտոմատացումը որակի վերահսկողությունը դարձնում են ակտիվ, շարունակական գործընթաց: Հավաքված բոլոր արդյունքները միավորելով կենտրոնացված տվյալների բազայում, հետագայում հավաքագրված տվյալների հիման վրա ստեղծվում է հանքավայրի Grid QA/QC և 3 D մոդուլները:

Ի վերջո, ճշգրիտ վերահսկողական գործընթացը նվազագույնի կհասցնի կողմնակալ կամ չներկայացված մետաղների թաքցնելու հնարավորությունները:

Այսպիսով, արդյունքում Տեսչական մարմինը նշված համակարգի և անօդաչու թռչող սարքերի միջոցով ունենալու է հնարավորություն լիարժեք վերահսկել մետաղական հանքավայրերի շահագործումն իրական ժամանակում:

1.3 ՄԹՆՈԼՈՐՏԱՅԻՆ ՕԴԻ, ՋՐԵՐԻ, ՀՈՂԵՐԻ, ՎՏԱՆԳԱՎՈՐ ՆՅՈՒԹԵՐԻ ԵՎ ԹԱՓՈՆՆԵՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅԱՆ, ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.3.1 Առկա խնդիրները և բացահայտված ռիսկերը

2023 թվականի ընթացքում իրականացված վերահսկողական գործառույթների արդյունքում գրեթե բոլոր վերոգրյալ ուղղություններում արձանագրվել են խախտումներ, մասնավորապես՝ առանց անշարժ աղբյուրներից աղտոտող նյութեր մթնոլորտ արտանետելու չափաքանակների/արտանետման թույլտվությունների կամ ՍԹԱ նախագծի շեղումներով, արտանետումների գերազանցմամբ աղտոտող նյութերը մթնոլորտ արտանետելը, ինչպես նաև շենքերի և շինությունների կառուցման աշխատանքների ընթացքում շինարարական հրապարակներում օրենսդրության պահանջների չկատարելը:

ՀՀ որոշ տարածքներում՝ մասնավորապես մայրաքաղաքում, մթնոլորտային օդի աղտոտման հիմնական աղբյուրներ են հանդիսանում տրանսպորտը, արդյունաբերությունը, քաղաքաշինությունը, լայնամասշտաբ շինարարական աշխատանքներում արձանագրված անօրգանական փոշու արտանետումների գերազանցումները: Չնայած այն հանգամանքին, որ ՀՀ օրենսդրությամբ սահմանված են շինարարության ընթացքում շինարարական հրապարակից դուրս փոշու արտանետումների տարածվելը կանխարգելելու պահանջ/պայմաններ, անհրաժեշտ է օրենսդրական փոփոխություններ:

Ավտոտրանսպորտային միջոցների քանակի ավելացմամբ, ինչպես նաև դրանց տեխնիկական ոչ լիարժեք հագեցվածությամբ պայմանավորված՝ ավելացել է մթնոլորտում ածխաջրածինների, ածխածնի օքսիդի և ազոտի երկօքսիդի քանակությունը: Չնայած որ ՀՀ-ում շահագործվող ավտոտրանսպորտային միջոցներից վնասակար նյութերի արտանետումների չափումների իրականացման կարգը սահմանված է, սակայն այն կիրառելի չէ, և դրա վերաբերյալ փոփոխությունների

առաջարկությունները ներկայացվել են դեռևս 2023 թվականին, իսկ դրա ընդունման գործընթացը կշարունակվի 2024 թվականին:

Հանքարդյունաբերության բնագավառում հանքանյութի արդյունահանման, տեղափոխման և վերամշակման արդյունքում արձանագրվել է անօրգանական փոշու, ինչպես նաև ձեռնարկություններում օգտագործված վառելիքի (բնական գազ) արյումից առաջացած գազերի (ածխածնի և ազոտի օքսիդներ) քանակական ավելացում մթնոլորտում: Մետաղների վերամշակմամբ զբաղվող ձեռնարկությունների գործունեության ընթացքում արձանագրվել են ծծմբի երկօքսիդի արտանետումների գերազանցումներ՝ պայմանավորված հեռացող գազերի (մասնավորապես ծծմբի) որսման համակարգերի ոչ լիարժեք աշխատանքով:

Մթնոլորտային օդի վրա վնասակար ներգործություն ունեցող կազմակերպություններին հաշվառելու կարգավորումները ներկայումս բացակայում են, քանի որ տնտեսավարող սուբյեկտները մինչև գործունեություն ծավալելը համապատասխան լիազոր մարմիններին չեն ներկայացնում գործունեության վերաբերյալ տեղեկատվությունը:

ՀՀ-ում բարձրորակ ստորերկրյա բնական ջրերի ամենամեծ շտեմարանը զբաղեցնում է Արարատյան դաշտավայրը: Ջրային ռեսուրսների թերի կառավարման պատճառով ՀՀ-ում հիմնական գյուղմթերք արտադրող շատ համայնքների՝ դաշտավայրի համար խմելու և ոռոգման ջրի հասանելիությունը սահմանափակ է: Ոռոգման ջրի պահանջարկն այժմ աճում է կլիմայի փոփոխության պատճառով, իսկ ձկնաբուծարանների զարգացման և ջրօգտագործման թույլտվությունների մեծ քանակի տրամադրումը հանգեցնում է ստորերկրյա ջրային ռեսուրսների կտրուկ սպառման:

Ջրօգտագործման արդյունավետության բարձրացման տեսակետից պետական մարմինների, ինչպես նաև տնտեսավարող սուբյեկտների համար կարևոր է ջրօգտագործման ծավալների ճիշտ չափումն ու հսկողությունը: Առանց հանրային մասնակցության համակարգը չի կարող արդյունավետ կառավարվել, սակայն ջրային

ռեսուրսների կառավարման գործընթացներում Արարատյան դաշտի բնակիչների և ջրօգտագործողների մասնակցության և իրազեկվածության մակարդակը ցածր է:

ՀՀ մարզերում ջրօգտագործումն իրականացվում է մի շարք թերություններով. ջրառը շատ դեպքերում իրականացվում է առանց ջրաչափերի կամ չստուգաչափված (չաշխատող) ջրաչափերով:

Ձկնաբուծությամբ զբաղվող տնտեսավարող սուբյեկտների մոտ իրականացված ստուգումների արդյունքում արձանագրվել են ջրօգտագործման թույլտվության պայմանների խախտման դեպքեր (ջրօգտագործման թույլտվության ծավալների գերազանցում, հեռացվող կեղտաջրերի մաքրման բացակայություն և ոչ սահմանված վայրերում արտահոսք):

Նախորդ տարիներին արձանագրվել են թափոնների կառավարման ուղղության բազմաթիվ խախտումներ: Հաշվի առնելով, որ ՀՀ-ում չի գործում թափոնների կառավարման արդյունավետ համակարգ, թափոններով ծածկված տարածքները ընդլայնվում են և արդյունքում բարձրանում է ոլորտային ռիսկը: Արձանագրվել են արտադրական և սպառման թափոնների սահմանված կարգով հաշվառման բացակայության, չթույլատրված տեղերում տեղադրման, սահմանված կարգին համապատասխան վտանգավոր թափոնների անձնագրերի, վտանգավոր թափոնների վերամշակման վնասազերծման, պահման, փոխադրման և տեղադրման գործունեության լիցենզիաների բացակայության դեպքեր: Համատարած բնույթ են կրում տեղական ինքնակառավարման մարմիններում իրականացվող աղբահանության ոչ պատշաճ գործընթացի խախտումները:

Իրականացված վերահսկողության արդյունքում արձանագրվել են նաև հողի բերրի շերտի ապօրինի օգտահանման, պահպանման և տեղափոխման իրավախախտումներ:

1.3.2 Ռիսկերի նվազեցմանն ուղղված տարեկան միջոցառումներ

Առկա խնդիրների շրջանակներում արձանագրվող իրավախախտումների քանակի և դրանց հետևանքով առաջացող ռիսկերի նվազեցման նպատակով 2024 թվականի կտրվածքով ԲԸՏՄ-ի կողմից իրականացվելու են ՀՀ օրենսդրությամբ սահմանված վերահսկողական միջոցառումներ՝ տարեկան պլանավորված ստուգումներ, ինչպես նաև իրավապահ և այլ պետական մարմինների հետ համատեղ շարունակական կանխարգելիչ միջոցառումներ:

Հաշվի առնելով բնապահպանության և ընդերքի ոլորտներում տնտեսական գործունեություն իրականացնող գրեթե 90% տնտեսավարող սուբյեկտների մոտ առկա մթնոլորտային օդի, ջրի, թափոնների, հողի պահպանության հետ առնչվող իրավախախտումները՝ պլանավորվում է իրականացնել վերահսկողություն համայնքապետարաններում, ՓՀԷԿ-երում, ձկնաբուծարաններում, կոմունալ տնտեսություններում, շինարարական և արտադրական ընկերություններում: ՀՀ բնակավայրերում և մայրուղիներում անհրաժեշտ է իրականացնել վերահսկողություն հողի բերրի շերտի ապօրինի օգտահանման, պահպանման և տեղափոխման, ինչպես նաև առանց անթափանց ծածկի սորուն նյութերի, հողազանգվածի, շինարարական աղբի տեղափոխման նկատմամբ և այլն:

Այս խնդրի լուծման գործում ակնկալվում է մարզպետարանների, համայնքների ղեկավարների աջակցությունը:

Մթնոլորտային օդի, ջրերի, հողերի, թափոնների օգտագործմանը ու պահպանությանը վերաբերող ՀՀ օրենսդրությունը կարգավորող առաջարկությունները դեռևս 2023 թվականին ներկայացվել են լիազոր մարմին: Շահագրգիռ մարմինների հետ 2023 թվականին դրանք քննարկվել են, սակայն դեռևս չեն հաստատվել: Քննարկումները նախատեսվում է շարունակել 2024 թվականին, մասնավորապես ներքոհիշյալ հարցերի շուրջ.

- ✓ ՀՀ կառավարության 1999 թվականի «Մթնոլորտային օդի վրա վնասակար ներգործությունների պետական հաշվառման կարգը հաստատելու մասին» թիվ 259-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու վերաբերյալ կապված մթնոլորտ վնասակար նյութերի արտանետումների հաշվառման ենթակա կազմակերպություններին հաշվառելու ընթացակարգի հստակեցման մասով,
- ✓ ՀՀ կառավարության 2003 թվականի «Ջրային ռեսուրսների վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության գնահատման կարգը հաստատելու մասին» թիվ 1110-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու վերաբերյալ, մասնավորապես՝ տնտեսական գործունեության հետևանքով ջրային ռեսուրսներից ջրառի իրականացման մասով,
- ✓ «Թափոնների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու վերաբերյալ, մասնավորապես՝ թափոնների պահման ժամկետների հստակեցման մասով,
- ✓ Շինարարության ընթացքում շինարարական հրապարակից դուրս փոշու արտանետումների տարածվելը կանխարգելելու նպատակով, առաջարկում ենք կիրառել միջազգային փորձը և օգտագործել փոշեզսպման (ջրի թնդանոթ) ժամանակակից տեխնոլոգիաները:

2. 2024 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ ՊԼԱՆԱՎՈՐՎԱԾ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐ

Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնում հաշվառվել են ընդհանուր թվով 4951 տնտեսավարող և 2019 թվականի օգոստոսի 22-ի թիվ 1125-Ն որոշման հավելվածով հաստատված Տեսչական մարմնի կողմից իրականացվող՝ ռիսկի վրա հիմնված ստուգումների մեթոդաբանության և ռիսկայնությունը որոշող չափանիշների 5-րդ, 5.1-րդ և 5.2-րդ կետերի համաձայն հաշվարկվել է դրանց ռիսկայնությունը.

Ռիսկայնության խմբերը	Ռիսկայնության խմբում ընդգրկված %	Տնտեսավարող սուբյեկտների քանակը (Հաշվարկային)	Տնտեսավարող սուբյեկտների քանակը (Փաստացի)
Բարձր	20	990,2	989
Միջին	50	2475,5	2455
Ցածր	30	1485,3	1507

Տարեկան ստուգումների ծրագիրը կազմելիս և ստուգմանը ընդգրկվող տնտեսավարող սուբյեկտների քանակը որոշելիս, հաշվի են առնվել՝ ստուգումներում ընդգրկվող Տեսչական մարմնի աշխատակիցների թվաքանակը և նախորդ տարիներին իրականացված ստուգումների տևողությունը, ինչպես նաև իրավապահ, լիազոր և այլ պետական մարմիններից ստացված տեղեկությունները, դիմում բողոքների կանխատեսվող քանակները:

Ստորև ներկայացվում է 2024 թվականի տարեկան ստուգումների ծրագրում ընդգրկված՝ 180 տնտեսավարող սուբյեկտների քանակը՝ ըստ Տեսչական մարմնի տարածքային ստորաբաժանումների և ռիսկայնության աստիճանի.

N	Տարածքային ստորաբաժանման անվանումը	Ստուգման ենթակա տնտեսավարողների քանակը, որից՝	Ռիսկայնության աստիճանը՝ **բարձր**	Ռիսկայնության աստիճանը՝ **միջին**	Ռիսկայնության աստիճանը՝ **ցածր**
1	Երևանի	30	21	9	-
2	Արագածոտնի	12	6	6	-
3	Արարատի	15	13	2	-
4	Արմավիրի	19	19	-	-
5	Գեղարքունիքի	16	7	9	-
6	Լոռու	18	13	5	-
7	Կոտայքի	20	20	-	-
8	Շիրակի	12	4	7	1
9	Սյունիքի	12	9	3	-
10	Վայոց ձորի	12	9	3	-
11	Տավուշի	14	5	8	1
	ԸՆԴԱՄԵՆԸ	**180**	**126**	**52**	**2**

2024թ. ստուգումների տարեկան ծրագրում ընդգրկված են թվով 180 տնտեսավարող սուբյեկտներ ըստ տնտեսավարող սուբյեկտների գործունեության ստորև ներկայացված ոլորտների և հաշվի առնվել եղանակային պայմանները բաժանվել են ըստ ստորև ներկայացված եռամսյակների.

- ընդերքօգտագործում – ***26***, որից 4-ը՝ հանքային ջուր, 22-ը՝ ոչ մետաղական

- էլեկտրաէներգիայի արտադրություն հիդրոէլեկտրակայաններում - ***22***
- էլեկտրաէներգիայի արտադրություն ջերմաէլեկտրակայաններում - ***3***
- անտառային տնտեսություններ - ***2***
- ձկնաբուծություն - ***22***
- արտադրություն - ***51***
- ջրօգատագործում - ***1***
- թափոնների տեղադրում և ոչնչացում - ***8***
- շինարարություն – ***23***
- հյուրանոց և ռեստորան – ***3***
- ոչ բազմամյա մշակաբույսերի աճեցում – ***5***
- պետական կառավարչական հիմնարկ – ***6***
- անասնաբուծություն – ***3***
- ավտոմեքենաների տեխնիկական սպասարկում և նորոգում – ***4***
- այլ անհատական ծառայությունների մատուցում /օդային տրանսպորտի օժանդակ գործունեություն/ - ***1***

2024 թվականի թվով 180 ստուգումների տարեկան ծրագիրը՝ ըստ եռամսյակների

Ստուգումների տարեկան ծրագրում ընդգրկված տնտեսավարող սուբյեկտների թվաքանակն ըստ եռամսյակների	
եռամսյակ	**ստուգումների քանակ**
1	41
2	49
3	47
4	43

2024 թվականի ընթացքում ԲԸՏՄ-ի կողմից նախատեսված միջոցառումները ըստ կատարման ժամանակացույցի ներկայացված են *Հավելված 1-ում*:

2024 թվականի ընթացքում ԲԸՏՄ-ի կողմից նախատեսված կանխարգելիչ և իրազեկման միջոցառումները ըստ կատարման ժամանակացույցի ներկայացված են *Հավելված 2-ում*:

Հավելված 1

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

2024 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

h/h	Միջոցառման անվանումը	Ակնկալվող արդյունքը	Կատարողը	Համակատարողը	Ժամկետը
1	*2*	*3*	*4*	*5*	*6*
1	Մթնոլորտային օդի պահպանության, ջրային ռեսուրսների օգտագործման և պահպանության, հողերի օգտագործման և պահպանության, ընդերքօգտագործման և ընդերքի պահպանության, կենդանական և բուսական աշխարհի օգտագործման և պահպանության, վտանգավոր նյութերի, արտադրության ու սպառման թափոնների գործածության, սահմանված ժամկետում հաշվետվությունների ներկայացման ոլորտային ուղղություններում ՀՀ օրենսդրության պահանջների նկատմամբ վերահսկողության իրականացում	թվով 41 տնտեսավարող սուբյեկտի մոտ ստուգման իրականացում	Տարածքային ստորաբաժանումներ և ոլորտային վերահսկողություն իրականացնող վարչություններ	Իրավական աջակցության և փաստաթղթաշրջանառության, Ռիսկի գնահատման և վերլուծությունների վարչություններ	I եռամսյակ
		թվով 49 տնտեսավարող սուբյեկտի մոտ ստուգման իրականացում			II եռամսյակ
		թվով 47 տնտեսավարող սուբյեկտի մոտ ստուգման իրականացում			III եռամսյակ
		թվով 43 տնտեսավարող սուբյեկտի մոտ ստուգման իրականացում			IV եռամսյակ

2	Սևանա լճում սիգի ձվադրման ժամանակահատվածում իրականացվող համատեղ միջոցառումներ	Սիգ տեսակի ձկան վերարտադրության ապահովում և կենդանական աշխարհի օբյեկտների ապօրինի օգտագործման կանխարգելում	Կենսաբազմազանության վերահսկողության վարչություն և տարածքային ստորաբաժանումներ	Տարածքային ստորաբաժանումներ	I և IV եռամսյակներ, Գեղարքունիք, Տավուշ, Երևան
3	Կենդանիների վերարտադրության և որսի թույլտվության ժամանակահատվածում ապօրինի որսորդության դեմ անցկացվող միջոցառումներ	Կենդանական աշխարհի օբյեկտների ապօրինի օգտագործման կանխարգելում	Կենսաբազմազանության վերահսկողության վարչություն	Տարածքային ստորաբաժանումներ	I և II կիսամյակներ, ՀՀ ողջ տարածքով
4	Հողի բերրի շերտի ապօրինի օգտահանման, պահպանման և տեղափոխման միջոցառումներ	Հողի բերրի շերտի ապօրինի օգտագործման կանխարգելում	Ջրերի, մթնոլորտի, հողերի, թափոնների և վտանգավոր նյութերի, Կենսաբազմազանության վերահսկողության վարչություններ	Տարածքային ստորաբաժանումներ	I և II կիսամյակներ, Գեղարքունիք, Արագածոտն, Կոտայք
5	Ապօրինի ծառահատման և ձեռքբերված փայտանյութի տեղափոխման միջոցառումներ	Տեղափոխվող փայտանյութի ապօրինի օգտագործման կանխարգելում	Կենսաբազմազանության վերահսկողության վարչություն	Տարածքային ստորաբաժանումներ	I և II կիսամյակներ, ՀՀ ողջ տարածքով
6	Մթնոլորտային օդի պահպանության վերահսկողության ուղղված կանխարգելիչ միջոցառումներ	Բեռնատար ավտոմեքենաների անթափանց ծածկոցների բացակայության հայտնաբերում և տեղափոխվող սորուն նյութերի շրջակա	Ջրերի, մթնոլորտի, հողերի, թափոնների և վտանգավոր նյութերի, Կենսաբազմազանության վերահսկողության վարչություններ	Տարածքային ստորաբաժանումներ	I և II կիսամյակներ, ՀՀ ողջ տարածքով

		միջավար թափվելու կանխարգելում, շինարարական հրապարակից դուրս փոշու արտանետումների տարածման կանխարգելելում			
7	Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի հետ համագործակցության շրջանակներում ԲԸՏՄ-ի անձնակազմին անօդաչու թռչող սարքերի կիրառման համար անհրաժեշտ ծրագրերի (մարկշեյդերական չափագրումների) և վերլուծական գործիքների ուսուցում	Վերահսկողության արդյունավետության բարձրացում	Ընդերքի վերահսկողության վարչություն	Տարածքային ստորաբաժանումներ	I եռամսյակ
8	ՀՀ կառավարության 2019 թվականի N 1423-Ն որոշման մեջ փոփոխությունների և լրացումների առաջարկի ներկայացում Գրասենյակ	Գործող օրենսդրական դաշտի համապատասխանության ապահովում	Իրավական աջակցության և փաստաթղթաշրջանառության վարչություն	Ընդերքի վերահսկողության, Ջրերի, մթնոլորտի, հողերի, թափոնների և վտանգավոր նյութերի, Կենսաբազմազանության վերահսկողության վարչություններ	II եռամսյակ

9	«Թափոնների մասին» ՀՀ օրենքում փոփոխությունների նախագծի ներկայացում Գրասենյակ	Թափոնների պահման ժամկետների հստակեցում	Իրավական աջակցության և փաստաթղթաշրջանառության վարչություն	Ջրերի, մթնոլորտի, հողերի, թափոնների և վտանգավոր նյութերի վերահսկողության վարչություն	II եռամսյակ
10	ՀՀ կառավարության 2003 թվականի «Ջրային ռեսուրսների վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության գնահատման կարգը հաստատելու մասին» օգոստոսի 14-ի N 1110-Ն որոշման փոփոխությունների առաջարկի ներկայացում Գրասենյակ	Տնտեսական գործունեության հետևանքով ջրային ռեսուրսներից ջրառի իրականացման համար վնասի հաշվարկման գործընթացի վերանայում	Իրավական աջակցության և փաստաթղթաշրջանառության վարչություն	Ջրերի, մթնոլորտի, հողերի, թափոնների և վտանգավոր նյութերի վերահսկողության վարչություն	II եռամսյակ
11	«Բնապահպանական իրավախախտումների հետևանքով կենդանական և բուսական աշխարհին պատճառված վնասի հատուցման սակագների մասին» ՀՀ օրենքում փոփոխությունների առաջարկի ներկայացում Գրասենյակ	Գործող օրենսդրական դաշտի համապատասխանության ապահովում	Իրավական աջակցության և փաստաթղթաշրջանառության վարչություն	Կենսաբազմազանության վերահսկողության վարչություն	II եռամսյակ
12	«Բնապահպանական վերահսկողության մասին» ՀՀ օրենքում փոփոխությունների առաջարկի ներկայացում Գրասենյակ	Գործող օրենսդրական դաշտի համապատասխանության ապահովում	Իրավական աջակցության և փաստաթղթաշրջանառության վարչություն	Հիմնական կառուցվածքային և տարածքային ստորաբաժանումներ	II եռամսյակ

13	Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում փոփոխությունների առաջարկի ներկայացում Գրասենյակ	Գործող օրենսդրական դաշտի համապատասխանության ապահովում	Իրավական աջակցության և փաստաթղթաշրջանառության վարչություն	Հիմնական կառուցվածքային և տարածքային ստորաբաժանումներ	II եռամսյակ
14	ԲԸՏՄ պետական տեսուչների վերապատրաստման դասընթացներ	ԲԸՏՄ աշխատակիցների մասնագիտական կարողությունների զարգացում	Իրավական աջակցության և փաստաթղթաշրջանառության վարչություն	Հիմնական կառուցվածքային և տարածքային ստորաբաժանումներ	I եռամսյակ

Հավելված 2

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

2024 ԹՎԱԿԱՆԻ ԿԱՆԽԱՐԳԵԼԻՉ ԵՎ ԻՐԱԶԵԿՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

h/h	**Միջոցառման անվանումը**	**Նպատակը և ակնկալվող արդյունքը**	**Կատարողը**	**Համակատարողը**	**Ժամկետը**
1	*2*	*3*	*4*	*5*	*6*
1	Բնապահպանության և ընդերքի ոլորտներում իրազեկման աշխատանքների իրականացում (մամուլի հաղորդագրություններ, հայտարարություններ, հաշվետվություններ) Ուղղություններ՝ ✓ մթնոլորտային օդի պահպանություն ✓ ջրային ռեսուրսների օգտագործում և պահպանություն ✓ հողերի օգտագործում և պահպանություն ✓ ընդերքօգտագործում և ընդերքի պահպանություն ✓ կենդանական և բուսական աշխարհի	Տեսչական մարմնի վերահսկողական ոլորտների վերաբերյալ հանրային իրազեկվածության բարձրացում Հնարավոր խախտումների կանխարգելում Թափանցիկության, հրապարակայնության և հաշվետվողականության ապահովում	Իրազեկման և հանրության հետ տարվող աշխատանքների բաժին	Իրավական աջակցության և փաստաթղթաշրջանառության վարչություն Ոլորտային և տարածքային ստորաբաժանումներ	**Յուրաքանչյուր եռամսյակ** իրազեկման 10 աշխատանք

	օգտագործում և պահպանություն ✓ վտանգավոր նյութեր, արտադրության ու սպառման թափոններ ✓ պետական փորձաքննություններ ✓ բնապահպանական հարկ և բնօգտագործման վճարներ ✓ վիճակագրական հաշվետվություններ				
2	Տեսչական մարմնի ղեկավարի և այլ պաշտոնատար անձանց հետ մամուլի ասուլիսների և/կամ հարցազրույցների կազմակերպում ու անցկացում	Տեսչական մարմնի գործունեության վերաբերյալ հասարակության տեղեկացվածության բարձրացում Թափանցիկության ապահովում ԶԼՄ-ների հետ համագործակցություն	Իրազեկման և հանրության հետ տարվող աշխատանքների բաժին		**Յուրաքանչյուր կիսամյակ** 2 միջոցառում
3	Իրազեկում-հանդիպումներ տնտեսավարողների, հասարակական կազմակերպությունների հետ բնապահպանության	Տնտեսավարող սուբյեկտների և հանրության իրազեկվածության մակարդակի բարձրացում, իրենց իրավունքների և	Իրազեկման և հանրության հետ տարվող աշխատանքների բաժին	Իրավական աջակցության և փաստաթղթաշրջանառության վարչություն	**I եռամսյակ**-Երևան **II եռամսյակ** - Արմավիր, Արագածոտն, Շիրակ

	և ընդերքի ոլորտներում օրենսդրական փոփոխությունների, պահանջների կատարման վերաբերյալ (Երևան՝ 2, ՀՀ մարզեր՝ 1-ական)	պարտականությունների մասին իրազեկման ապահովում, հնարավոր խախտումների կանխարգելում		Ոլորտային և տարածքային ստորաբաժանումներ	**III եռամսյակ** - Արարատ, Վայոց ձոր, Սյունիք **IV եռամսյակ** - Կոտայք, Գեղարքունիք Տավուշ, Լոռի
4	Վարչական վարույթների, դիմում-բողոքների, ահազանգերի, հարցումների վիճակագրության վարում, ամփոփում, հրապարակում	Իրավիճակի համեմատական վերլուծության արդյունքում՝ առկա խնդիրների բացահայտում Թափանցիկության, հրապարակայնության և հաշվետվողականության ապահովում	Իրազեկման և հանրության հետ տարվող աշխատանքների բաժին	Ռիսկի գնահատման և վերլուծությունների վարչություն Իրավական աջակցության և փաստաթղթաշրջանառության վարչություն	**Յուրաքանչյուր կիսամյակի** ամփոփումից հետո՝ 15 օրվա ընթացքում